ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում Տ. Շահե արքեպս. Աճեմյանի նախագահությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու միաբան հայրերի վարդապետական թեզերի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետի աստիճանի արժանացան Տ. Արմաշ աբդ. Նալբանդյանը և Տ. Եղիշե աբդ. Ավետիսյանը:

Հայր Արմաշի ուսումնասիրության թեման էր՝ «Ակնարկ Ս. Գրիգոր Լուսավորչին և Աթանասին վերաբերվող հայերեն Պատարագների առ այսօր եղած հետազոտությունների մասին»: Հայր Եղիշեի վարդապետական թեզն էր՝ «Աբասի որդի Գրիգոր վրդ. Սանահնեցու «Գիրք Պատճառացը»:

Դեկտեմբերի 23-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանների տվչության արարողություն՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետներին տրվեցին օձագլուխ գավազաններ՝ իբրև վարդապետական աստիճանի և իմաստության խորհրդանիշ:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վարդապետներին՝ Ներսես Սրբազանի ուղեկցությամբ: Իր օրհնությունը տալով նորընծաներին՝ Վեհափառ Հայրապետը նրանց շնորհեց լանջախաչեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ